ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am,
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

28.02.2020
344-65

«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ գլխավոր
տնօրեն Անատոլի Գոգոտինին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գոգոտին,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել INFOCOM լրատվական կայքի լրագրող Թեհմինե Ենոքյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում: Հունվարի 15-ին լրագրողը ուղարկել է տեղեկություն ստանալու հարցում, որը սակայն մնացել է անպատասխան:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Խնդրում եմ նշել քանի՞ տոննա պոչանք կա Արարատի ցիանային պոչամբարում և ի՞նչ նյութեր է պարունակում այդ պոչանքը:
2. Տարածում առկա են ձկնաբուծական լճեր, ինչպիսի՞ պաշտպանիչ շերտ ունի պոչամբարը և ստորգետնյա հոսքերով արդյո՞ք պոչանքը չի հոսում նաև այդ լճերը:
3. Ստուգե՞լ եք երբևէ պոչամբարի հարակից հողերի, լճերի և այդ լճերում առկա ձկնեղենի մեջ ծանր մետաղների պարունակությունը, եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել ստուգումների արդյունքները:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան